Ընկերության ղեկավարության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Ընկերության ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ Ընկերության կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:

Ղեկավարություն

Դավիթ Աթանեսյան	**Գլխավոր տնօրեն**		21.08.18թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գայանե Կորեկյան	**Գլխավոր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ**		21.08.2018թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ

<ԱՌԱՋԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ>ՈՒՎԿ ՍՊԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<Առաջին հիփոթեքային ընկերություն> ՈՒՎԿ կառավարման մարմնի՝ միջանկյալ սույն զեկույցը ներկայացնում է՝

- **Ընկերության բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի ներկայացում,**
- **Կարևոր դեպքերի ներկայացում,**
- **Ընկերության հնարավոր հետագա զարգացման ներկայացում:**

Սույն զեկույցը պատրաստված է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների /ՖՀՄՍ/ համաձայն:

ԱԿՏԻՎՆԵՐ

Հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի ավարտին Ընկերության ակտիվները կազմել են 7,925,410 հազ. ՀՀ դրամ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի տվյալներով՝ 8,323,289 հազ. դրամ: 2018 թ-ի առաջին կիսամյակում ակտիվները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կրճատվել են՝ 397,879 հազ.դրամով:

	30.06 2018թ. հազ. դրամ	**30. 06 2017թ. հազ. դրամ**
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	**477,972**	**179,574**
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	**159,291**	**429,485**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	**3,680**	**3,680**
Հաճախորդներին տրված վարկեր	**6,877,382**	**7,287,418**
Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ	**362,439**	**384,147**
Ընթացիկ հարկային ակտիվ	**0**	**2,516**
Այլ ակտիվներ	**44,646**	**36,469**
Ընդամենը ակտիվներ	**7,925,410**	**8,323,289**

Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին դիտվել է հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների 410.036 հազ.դրամի նվազում՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, մնացորդները կազմելով 6,877,382 հազ. դրամ:

Ընկերության տրամադրած վարկերը սպասարկվում են պայմանագրերին համապատասխան և վերջիններիս մեծամասնությունը դասակարգված է որպես ստանդարտ վարկ, ինչը վկայում է Ընկերության վարկային ռիսկի կառավարման բարձր մակարդակի մասին:

Ստորև ներկայացվում է վարկային ներդրումների և վարկերի արժեզրկման պահուստների փոփոխությունը 2018 և 2017 թթ. առաջին կիսամյակի դրությամբ:

1. Վարկեր հաճախորդներին

	2018թ.ի I-ի կիսամյակ հազ. դրամ	**2017թ.ի I-ի կիսամյակ հազ. դրամ**
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	**6,990,950**	**7,404,338**
Վարկերի արժեզրկման պահուստ	**(113,568)**	**(116,920)**
	6,877,382	**7,287,418**

Արտարժութային գործառնություններ

Հաշվետու ժամանակահատվածում Ընկերության արտարժութային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմել են.

ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 20,9 մլն. ԱՄՆ դոլար,

ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 77.7 մլն. ՌԴ ռուբլի,

Եվրոյով գործարքների ծավալը՝ 2.2 մլն. եվրո:

Վերը նշված արտարժութային գործառնություններից հաշվետու կիսամյակում ստացված զուտ եկամուտը կազմել է 1,598 հազ. դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 4,892 հազ. դրամի դիմաց:

Պարտավորություններ

2018թ.-ի առաջին կիսամյակի ավարտին Ընկերության պարտավորությունները կազմել են 6,507,328 հազ. դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 357,863 հազ. դրամով:

Ֆինանսական պարտավորություններ	**2018թ.ի I-ի**	**2017թ.ի I-ի**

	կիսամյակ հազ. դրամ	կիսամյակ հազ. դրամ
Փոխառություններ և վարկեր	**6,082,485**	**6,805,410**
Թողարկված պարտքային արժեթղթեր	**341,089**	**-**
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**83,754**	**59,781**
	6,507,328	**6,865,191**

2. Ներգրավված վարկեր, փոխառություններ

	2018թ.ի Ի-ի կիսամյակ հազ. դրամ	2017թ. Ի-ի կիսամյակ հազ. դրամ
Պետական մասնակցությամբ ֆինանսական կազմակերպություններ	**3,067,881**	**3,404,482**
Միջազգային ֆինանսական կազմակերպություններ	**2,697,000**	**3,048,739**
Ոչ առևտրային կազմակերպություններ	**83,716**	**91,569**
ՀՀ Կենտրոնական բանկ	**61,748**	**101,936**
Բաժնետեր	**49,269**	**108,755**
Այլ կապակցված կողմեր	**0**	**0**
Այլ	**122,871**	**49,731**
Թողարկված արժեթղթեր	**341,089**	
	6,423,574	**6,805,212**

2018թ. հունիսի 30-ի դրությամբ Ընկերությունն ունի երեք կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ,ինչպես նաև թողարկված և տեղաբաշխված արժեթղթեր, որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2018թ. հունիսի 30-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 6,105,970 հազ. դրամ (2017թ-ի հունիսի 30-ի դրությամբ՝ 6,453,222 հազ. դրամ):

30.06.2018 թ. դրությամբ Ընկերության՝ հիփոթեքով ապահովված արժեթղթերի ներկա արժեքը կազմել է 341,089 հազ դրամ:

1. Թողարկված պարտքային արժեթղթեր

	2018թ.ի Ի-ի կիսամյակ հազ. դրամ	2017թ.ի Ի-ի կիսամյակ հազ. դրամ
Պարտատոմսեր ամորտիզացված արժեքով	**341,089**	-

					341,089		-

Կիսամյակի ընթացքում Ընկերությունը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ արժեթուղթ:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը վճարումների գծով չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

Թողարկված պարտատոմսերը ներառում են հետևյալ թողարկումները՝

	Թողարկման ժամկետ	Արժույթ	Քանակ	Եկամտա-բերություն	Մարման ժամկետ	Անվանական արժեք		Անվանական արժեք	
						2018թ հազ. դրամ		**2017թ. հազ. դրամ**	
Անվանական արժեկտրոնային պարտատոմս (ապահովված)	2017թ. դեկտեմբեր	ԱՄՆ դոլար	20,000	6.50%	2019թ. դեկտեմբեր	**241,120**	-		-
Անվանական արժեկտրոնային պարտատոմս (ապահովված)	2017թ. դեկտեմբեր	ՀՀ դրամ	10,000	10.50%	2019թ. դեկտեմբեր	**100,000**	-		
						341,120	-		

Պարտատոմսերը ապահովված են Ընկերության հիփոթեքային վարկերի պորտֆելով:

Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերը ցուցակված են ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ ֆոնդային բորսայում:

Ընդհանուր կապիտալ

Հաշվետու կիսամյակի ավարտին Ընկերության ընդհանուր կապիտալը կազմել է 1,418,082 հազ. դրամ:

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Կուտակված շահույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ

01.01.2018թ. դրությամբ	**1,000,000**	**320,567**	**1,320,567**
Բաժնետերերի հետ գործարքներ			
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	-	-	-
Շահաբաժին	-		
Համապարփակ եկամուտ			
Շահույթ ժամանակաշրջանի համար	-	**45,054**	**45,054**
ՀՀՄՍ-9-ի ազդեցություն		**52,461**	**52,461**
	1,000,000	**418,082**	**1,418,082**

Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու տարում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Ընկերության զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտները նվազել են 18,292 հազ. դրամով՝ կազմելով 406,546 հազ. դրամ:

3. Զուտ տոկոսային եկամուտ

	2018թ.ի Ի-ի կիսամյակ հազ. դրամ	**2017թ.ի Ի-ի կիսամյակ հազ. դրամ**
Տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	401,723	405,083
Ժամկետային ավանդներ բանկերում	4,823	19,755
	406,546	**424,838**
Տոկոսային ծախս		
Ներգրավված վարկեր, փոխառություններ	(220,846)	(249,605)
Թողարկված արժեթղթեր	(13,402)	0
	(234,248)	**(249,605)**
Զուտ տոկոսային եկամուտ	**172,298**	**175,233**

Հաշվետու կիսամյակում Ընկերության եկամուտների կազմում կոմիսիոն և այլ վճարներից ստացված զուտ եկամուտները կազմել են 18,463 հազ. դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 10,973 հազ. դրամով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է 2018 թվականի առաջին կիսամյակի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի՝ Ընկերության եկամուտների և ծախսերի կառուցվածքը:

	2018թ.ի Ի-ի կիսամյակ հազ. դրամ	**2017թ.ի Ի-ի կիսամյակ հազ. դրամ**
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	406,546	424,838
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(234,248)	(249,605)
Զուտ տոկոսային եկամուտ	**172,298**	**175,233**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	6,439	14,497
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(622)	(880)
Արտարժ.գործարքներից ստացված զուտ շահույթ/վնաս	1,598	4,892
Այլ գործառնական եկամուտ	10,426	12,348
Գործառնական եկամուտ	**190,139**	**206,090**
Վարկերից և այլ փոխառ. առաջացած կորուստներ, զուտ	(2,937)	(20,323)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(112,556)	(95,840)
Այլ գործառնական ծախսեր	(4,799)	(74,64)
Շահույթ մինչև հարկվելը	69,847	82,463
Շահութահարկի գծով ծախս	(24,793)	(14,390)
Շահույթ հարկումից հետո	45,054	68,073
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**45,054**	**68,073**

Շահույթ, շահութաբերություն և շահաբաժիններ

Հաշվետու կիսամյակի արդյունքներով, Ընկերությունը ձևավորել է 45,054 հազ. դրամի զուտ շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 68,073 հազ. դրամ շահույթի դիմաց:

Ամփոփ ֆինանսական տվյալներ

Հազ. ՀՀ դրամ

	2018թ.ի I-ի կիսամյակ հազ. դրամ	2017թ.ի I-ի կիսամյակ հազ. դրամ
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	477,972	179,574
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	159,291	429,485
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	3,680	3,680
Հաճախորդներին տրված վարկեր	6,877,382	7,287,418
Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ	362,439	384,147
Ընթացիկ հարկային ակտիվ	0	2,516
Այլ ակտիվներ	44,646	36,469
Ընդամենը ակտիվներ	**7,925,410**	**8,323,289**
Պարտավորություններ		
Ներգրավված վարկեր, փոխառություններ	6,082,485	6,805,410
Թողարկված պարտքային արժեթղթեր	341,089	-
Հետաձգված հարկային պարտավորություն	28,012	13,941
Այլ պարտավորություններ	55,742	45,840
	6,507,328	**6,865,191**

Կապիտալ		
Կանոնադրական կապիտալ	1,000,000	1,000,000
Կուտակված շահույթ	418,082	458,098
	1,418,082	**1,458,098**
Ընդամենը պարտավորություններ և կապիտալ	**7,925,410**	**8,323,289**

Ընկերության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար

հաջորդ հաշվետու

Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերության հետագա զարգացման խնդիրները և նպատակները պայմանավորված են Ընկերության ռազմավարական զարգացման հեռանկարներով, ուստի Ընկերությունը 2018թ.-ի համար կարևորում է հետևյալ առաջնահերթությունները.

1. Ընկերության գործունեության արդյունավետության բարձրացում,
2. Նոր գործընկերային հարաբերությունների հաստատում,
3. Նոր վարկային ռեսուրսների ավելացում, հաճախորդների հետ հարաբերությունների զարգացում,
4. Սպասարկման որակի շարունակական բարելավում,
5. Գործարար հարաբերությունների ընդլայնում: